ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07.1/31730

«10» «07» 2019թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի
նախագահ տիկին Շ.Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019թ. հուլիսի 2-ի գրության հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ հետ համատեղ մշակվել է սիրողական ձկնորսության և որսի հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգը, որը ներկայումս գտնվում է գործարկման վերջնական փուլում: Նշված գործընթացի շրջանակներում ֆինանսների նախարարության գանձապետարանում «Սիրողական ձկնորսություն կամ որս կատարելու համար՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից վճարներ» անվամբ բացվել է թիվ 900005001533 եկամտային հաշվեհամարը, որի գանձման համար պատասխանատու մարմինը շրջակա միջավայրի նախարարությունն է: Նշված հաշվեհամարը ներառվել է նաև պետական վճարումների էլեկտրոնային համակարգում՝ www.e-payments.am «Հարկեր» բաժնի «Բնապահպանական և բնօգտագործման վճարներ» ենթախմբում:

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1673-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերը տեղադրվում են շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի «Էլ-Կառավարում» պատուհանում www.mnp.am/am/pages/138:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով մատուցվող այլ ծառայություններ ներկայումս չեն մատուցվում:

Հարգանքով՝
պաշտոնակատար Վ. Ջիլավյան

7/9/2019

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

ՏՀՀԿՎ
Ա.Սուքիասյան
011-818-559

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | min_ecology@mnp.am | www.mnp.am
(+374) 11 818-520 | Fax: (+374) 11 818-506